Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Կարգադրութիւն

20740

Ղարաբաղու

Սուրբ Տիրամայր

Մարիամու օրիորդաց

ուսումնարանի

373
Ղ-46

1864

50206 ш.h
2010

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

# ՂԱՐԱԲԱՂՈՒ

ՍՈՒՐԲ ՏԻՐԱՄԱՅՐ ՄԱՐԻԱՄՈՒ ՕՐԻՈՐԴԱՑ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ



373
Ղ-46

1864

2002

ՇՈՒՇԻ։

373
Դ-46

ՀՐԱՄԱՆԱՒ ԲԱՐՁՐ ՍՐԲԱԶԱՆ ՎԻՃԱԿԱՒՈՐ ԱՌԱՋ-
ՆՈՐԴԻ՛Ն ՂԱՐԱԲԱՂՈՒ ՏԵԱՌ՛Ն ՍՏԵՓԱՆՆՈՍ ԱՐՔ
ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ։

5980

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

## ՂԱՐԱԲԱՂԻ ՍՈՒՐԲ ՏԻՐԱՄԱՅՐ ՄԱՐԻԱՄՈՒ ՕՐԻՈՐԴԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ

### ՀԻՄՆ ԵՒ ՆՊԱՏԱԿ

1. Շուշուայ հայ տիկնանց միաբանութիւնը՝ շարժուած լուսաւորութեան սիրովը և աղջկանց կրթութեան վեհ նշանակութեամբը ընտանեկան կենաց համար, որից կախեալ է ինչպէս իւրաքանչիւր մարդոյ երջանկութիւնը, այնպէս և ազգի բարօրութիւնը, հաստատում է Շուշիումը Օրիորդաց Ուսումնարան ամէն կարգի աղջկանց համար։

2. Շուշուայ Օրիորդաց Ուսումնարանը կոչւում է Ղարաբաղու Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսումնարան։

3. Ղարաբաղու Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսումնարանը գտնւում է Ղարաբաղու Մետրապօլիտական վիճակի Հոգևոր Կառավարչի բարձր հովանաւորութեան ներքոյ, ինչպէս գլխաւոր Հովվի վիճակին։

4. Ղարաբաղու Սուրբ Մարիամու Օրիորդաց ուսումնարանը հաստատուած է երթեւեկ աշակերտուհեաց համար։

5. Ղարաբաղու Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսումնարանի առարկայից դասատուութիւնը պէտք է լինի Հայոց լեզուաւ ։

6. Ղարաբաղու Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսումնարանի նպատակն է պատրաստել լուսաւորեալ վարժապետուհիք և լուսաւորեալ մայրեր ։

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ

7. Հոգաբարձուհեաց թիւը չէ սահմանուած ։

8. Ղարաբաղու Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսումնարանի Հոգաբարձուհի դառնալու համար վճարում է ամէն տարի վեց մանէթ արծաթ, Ուսումնարանը պահպանելու համար ։

9. Սուրբ Մարիամու Ուսումնարանի Հոգաբարձուհիք ընտրումեն իւրեանց միջից մէկին, Ուսումնարանի տեսչութեան պաշտօնը կատարելու և յանձնումեն նրան Ուսումնարանի բոլոր կառավարութիւնը ։

10. Սուրբ Մարիամու Ուսումնարանի Տեսչուհին ընտրում է իւրան օգնական և նշա-

ՊԵՏ ԳՆՁ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀԱՍՌ-Арм.ССР
35997-бе

նակում է վերակացուհիք աշակերտուհեաց վե-րայ հսկելու ։

11· Հոգաբարձուհիք իրաւունք ունին ա-մէն ժամանակ այցելութիւն անել Գարարա-ղու Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսում-նարանին ։

12· Սուրբ Մարիամու Ուսումնարանի ինչ-պէս պահելու և պահպանելու, նոյնպէս էլ ուսումն ընդլայնացնելու համար ընդունուում են նուէրք բոլոր ազգի անդամներից ։

13· Գարարաղու Սուրբ Մարիամու Օ-րիորդաց Ուսումնարանի Հոգաբարձութիւնը ունի իւր կնիքը և երկու ժապաւինեալ մա-տեան Օրիորդաց Ուսումնարանի Բարձր Հո-վանաւորի կնքով և ստորագրութեամբ· Մէկի մէջ Ուսումնարանի մուտքը և ծախսը գրելու համար, միւսի մէջ ազգի անդամների նուէրք-ները գրելու համար ։

14· Գարարաղու Սուրբ Մարիամու Օ-րիորդաց Ուսումնարանի Հոգաբարձութիւնը իրաւունք ունի իւր նկատողութեամբ ընդու-նել Ուսումնարանը խեղճ գերդաստանի աղջիկ-ներ 'ի հաշիւ բարերար անձանց ։

15. Ղարաբաղու Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսումնարանի Տեսչուհին արձակում է Օգնականին, աշակերտուհիներին, վարժապետներին և Վերակացուհույն, Ղարաբաղու Նզլիշեան Ազգային Հոգևոր Դպրոցի Տեսչի խորհրդով :

16. Ղարաբաղու Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսումնարանի Տեսչուհին նշանակում է ռոճիկ վարժապետներին, վերակացուհույն և ուրիշ ծառայողացը և անում է Ուսումնարանի ամէն ծախսերը :

17. Ղարաբաղու Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսումնարանի Տեսչուհին նշանակում է տարեկան հրապարակական հարցաքննութիւն, պարգև է տալի գերազանց հանդիսացող աշակերտուհեացը և տարեկան հանդիսի մէջ տալիս է լիովին հաշիւ նիւթական միջոցների և ուսումնական մասին համար :

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԸ

18. Ղարաբաղու Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսումնարանը գտնւում է ըստ ուսումնական մասին Ղարաբաղու Նզլիշեան Ազգային Հոգևոր Դպրոցի Տեսչի հսկողութեան ներքոյ :

19. Ղարաբաղու Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսումնարանի դասատուութեանց համար Սուրբ Մարիամու Ուսումնարանի Տեսչուհին նշանակում է վարժապետներ Ղարաբաղու Եղիշեան Ազգային Հոգևոր Դպրոցի Տեսչի խորհրդովը։

20. Սուրբ Մարիամու Ուսումնարանի Տեսչուհին պարտաւոր է անմիջապէս հսկողութիւն ունենալ դասատուութեանց վերայ։

21. Ղարաբաղու Սուրբ Մարիամու Ուսումնարանի մէջ դասատուութեան առարկայքը սրանք են. 1. Կրօն, 2. Սրբազան պատմութիւն, 3. Հայոց լեզու, 4. Ռուսաց լեզու, 5. Թուաբանութիւն, 6. Հայոց պատմութիւն, 7. Աշխարհագրութիւն, 8. Ձեռագործութիւն, 9. Վայելչագրութիւն 10. Նկարչութիւն և 11. Երգեցողութիւն։

22. Վերակացուհիք պարտաւոր են հսկողութիւն ունենալ աշակերտուհեաց վարուց վերայ նրանց Ուսումնարանումն եղած ժամանակումը, ձեռագործութիւն. սովորցնել և նայեցողութիւն ունենալ դասերը պատրաստելու համար։

23. Ղարաբաղու Սուրբ Մարիամու Օրիորդաց Ուսումնարանը աշակերտուհի սալ

C арм-и
5980



ցանկացողները պարտաւոր են խնդրագիր տալ Սուրբ Մարիամայ Ուսումնարանի Տեսչուհւոյ անունով ։

24. Ամէն մի աշակերտուհւոյ համար վճարւում է տարին տասն և հինգ մանէթ. Թղթի գրքերի ու ձեռագործութեան նիւթերի հոգացողութիւնը անում են աշակերտուհեաց տէրերը ։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Арм ССР
ИМ. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

20740
2013